10033

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«04» 07 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0087-22

Ձեռնարկողը՝ ***«Գազավիկ » ՍՊԸ***
ՀՀ Արագածոտնի մարզ, Մելիքգյուղ 1 փողոց, 39 տուն

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Գրիբոյեդով փողոց 48/6 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ՀՀ ք. Երևան, Գրիբոյեդով փողոց 48/6 հասցե

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 10 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0087-22
<04> 07 2022թ.

«Գազավիկ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Գրիբոյեդով փողոց 48/6 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Գազավիկ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ, ք. Երևան, Գրիբոյեդով փողոց 48/6 հասցե

Ներածական մաս. «Գազավիկ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Գրիբոյեդով փողոց 48/6 հասցեում կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի, «ա.» ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 10022022-01-0220, 0.7085 հա /ծածկագիրը՝ 01-003-0213-0063/, Երևանի քաղաքապետի 01.10.2021թ. N 3510-Ա որոշումը, Երևանի քաղաքապետարանի կողմից 01.10.2021թ. տրված N 01/18-07/3510-Ա նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/, Երևանի քաղաքապետարանի կողմից 08.10.2021թ. տրված N 01/18-122788-94 քանդման թույլտվությունը: Հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախագծով նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր: Այն բաղկացած է 4 մասնաշենքերից /Ա, Բ, Գ և Դ/, որոնց հարկերի քանակն է 12-ից մինչև 16:

Ըստ հատակագծային լուծման համալիրը ունի անկյունային տեսք, որի արդյունքում առաջանում է պարփակ նեքին բակ, որտեղից կազմակերպված են բնակելի հատվածի շքամուտքերը: Բոլոր մասնաշենքերում տեղադրված են երկուական վերելակներ, իսկ Ա, Բ և Դ մասնաշենքերում տեղակայված են մեկական աստիճանավանդակ, Գ մասնաշենքում՝ երկու աստիճանավանդակ:

Նկուղային հարկերը /–3.60, –6.90 և –10.20 նիշերում/ ամբողջովին զբաղեցնում է ավտոկայանատեղին, որի մուտքերը կազմակերպված է հողամասի ցածր նիշերից՝ Ա և Դ մասնաշենքի եզրային հատվածներից:

0.00 նիշում գտնվող առաջին հարկում ամբողջությամբ տեղակայված է հասարակական տարածքներ, որոնց մուտքերը կազմակերպված են ներբակային և միջբակային փողոցների ողջ երկայնքով:

Առաջին հարկի տարբեր հատվածներում են գտնվում բնակելի շենքի հիմնական մուտքերը և էվակուացիոն ելքերը ավտոկայանատեղիից:

Երկրորդից /+3.90 նիշ/ մինչև 16-րդ /+50.10 նիշ/ հարկերում տեղակայված են 1, 2, 3 և 4 սենյականոց բնակարաններ տրանսֆորմացվելու հնարավորությամբ: Առկա են բնակարաններ, որոնք ունեն ընդհարձակ տերասաններ:

Գլխավոր ճակատը լուծված է բնակելի բարձր հարկայնությամբ կառուցապատմանը հարիր ձևերով, երեսապատման և հարդարման նյութերի /տուֆե, բազալտե և տրավերտինե սալեր, բարձրորակ սվաղ և ապակե հարթություններ/ կիրառմամբ:

Տանիքը հարթ է, կազմակերպված ներքին ջրահեռացմամբ: Աստիճանավանդակի և վերելակներին հարակից դռները նախատեսվում է պատրաստել հակահրդեհային նյութերից: Մասնաշենքերի վերելակների բնակելի սենյակներին հարող հատվածներում նախատեսվում է երեսապատում հորանի պատի ներսից ձայնամեկուսիչ շերտով:

Նախագծման փոփոխության շարժառիթն է եղել գրունտի առանձնահատկությունը, ինչի պատճառով նախկինում նախատեսված երկու նկուղային հարկերի փոխարեն նախագծվել է երեք հարկ: Միևնույն ժամանակ փոփոխվել է նաև ստորգետնյա յուրաքանչյուր հարկի կառուցապատման մակերեսը 3989 ք.մ-ի փոխարեն առաջարկվող ստորգետնյա յուրաքանչյուր հարկի մակերեսը կազմում է 3176.8 ք.մ: Շենքի զրոյական նիշում և վերգետնյա ծավալում այլ փոփոխություններ չեն իրականացվել:

Հողամասի չկառուցապատված մասը նախատեսվում է բարեկարգել հետիոտն անցումներով, մեքենաների մոտեցումներով, ժամանակավոր կայանատեղիներով, ինչպես նաև կանաչ տարածքներով, հանգստի տաղավարներով, խաղահարթակներով և ջրային մակերեսներով: Մոտեցումներն ապահովված են Գրիբոյեդովի փողոցից:

Բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ նախատեսվել են թեքահարթակներ:

Համաձայն Երևանի քաղաքապետի կողմից 08.10.2021թ. տրված N 01/18-122788-94 քանդման թույլտվության՝ տարածքում առկա քանդման ենթակա են՝ ավտոտեխսպասարկման կայան (502.6 ք.մ), պահեստներ (42.5 ք.մ, 298.9 ք.մ և 114.5 ք.մ), օժանդակ շինություն (29.2ք.մ), հոր (21.3 ք.մ), օժանդակ շինություն (14.5 ք.մ) և պարիսպ (33.6 ք.մ) շինություններ, որն իրականացվելու է համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի հետ 08.10.2021թ. համաձայնեցված N01/18-05/2-122788-1026 քանդման նախագծի:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են՝

Հողամասի մակերեսը՝ 7085 ք.մ,

Կառուցապատման մակերեսը՝ 2833 ք.մ,

Կանաչապատման մակերեսը՝ 2840 ք.մ (40.08%),

Մայթեր և ճանապարհ (անջրանցիկ տարածք)՝ 1412 ք.մ,

Բնակարանների քանակը՝ 288,

Ստորգետնյա ավտոկայանատեղիների քանակը՝ 252,

–1, –2 և –3 յուրաքանչյուր հարկի կառուցապատման մակերեսը՝ 3176.8 ք.մ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրին կից գտնվում են բնակելի տներ, բազմաբնակարան բնակելի շենքեր, ԱԳԼՃ կայան, որից պահպանված է սահմանված 50մ հեռավորությունը:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի արևմտյան հատվածով անցնող Հրազդանի կիրճի ձախ թևում, իրենից ներկայացնում է հրաբխածին

02543163 ՓՈՐՁԱՐՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ COMMISSION OF EXPERTS

դելյուվիալ լանջի մի հատված, որը քաղաքաշինական կառուցապատման հետևանքով ենթարկվել է հարթեցման: Տարածքը փոքրաթեք է՝ հյուսիսից դեպի հարավ անկումով, որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1184÷1198 մետրերի սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից նախատեսվող գործունեության տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Տեղամասում մինչև 40 մետր խորությամբ փորված հորատանցքերով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում: Մոտակայքում մակերևույթային ջրային ռեսուրսներ չկան:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն տարածքում բացակայում են:

Համաձայն 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերում» ներառված և ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հաստատված քարտեզի՝ տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ, 9 և ավելի բալ սեյսմիկությամբ:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը, ինչպես նաև ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Նախատեսվող գործունեության տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան:

Նախնական ուսումնասիրությունների և գրականության տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չեն հայտնաբերվել:

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շինությունների հեռավորությունները մոտակա շենք-շինություններից պատկերված են շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտում /այսուհետ՝ Հայտ/ ներկայացված իրադրության հատակագիծ սխեմայում:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն նորմերի, հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 36 ամիս կամ 3 օրացուցային տարի շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների հետ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները կատարվելու է պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Հետիոտնի անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը նախատեսված է ցանկապատել 2.5 մ բարձրությամբ թիթեղով, մարդկանց անցման հատվածներում անվտանգության նկատառումներով պայմանավորված նախատեսված է թիթեղյա ծածկոց:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

02543163
ЕЗРАКЦЯЦЯ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվում է մրցույթով:

Մասնաշենքերի ներքին ինժեներական ցանցերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է Հայտում ներկայացված՝ շինհրապարակի կազմակերպման հատակագծում: Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որպեսզի ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու:

Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված: Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված /ընդհանրացված/ տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

Բրիգադների քանակական և մասնագիտական /որակական/ կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը կազմում է 100 մարդ, որից ինժիներատեխնիկական անձնակազմ՝ 8 մարդ:

Աշխատանքի պաշտպանություն.

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ /հատուկ արտահագուստ, կոշիկ, համալիր

պաշտպանության միջոցառումների կատարումով /ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ, արգելակիչ սարքեր և հարմարանքներ/, սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքները իրականացնող կազմակերպությանը:

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են հետևյալ շինարարական մեքենաները և մեխանիզմները.

Էքսկավատոր՝ 2հատ, բուլդոզեր՝ 1հատ, շարժական կոմպրեսոր՝ 1հատ, աշտարակային կռունկ՝ 3հատ, տոփանիչ՝ 2հատ, գույքային կաղապարամած՝ 1կոմպլ., թրթռիչ մակերեսային էլեկտրական՝ 1հատ, թրթռիչ խորքային էլեկտրական՝ 2հատ, փոխարկիչ թրթռիչների համար՝ 3հատ, եռակցման տրանսֆորմատոր՝ 2հատ, դակիչ ձեռքի էլեկտրական՝ 3հատ, ձեռքի էլեկտրական դուր՝ 3հատ, հղկող մեքենա՝ 3հատ, թրթռագլդոն՝ 1հատ, ավտոբետոնախառնիչ՝ քանակը հաշվարկով, ավտոբետոնատար՝ քանակը հաշվարկով, ինքնաթափ ավտոմոբիլ՝ քանակը հաշվարկով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական նյութերից օգտագործվելու է՝ ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման համար (1620 մ³/շին. ժամ.), ինչպես նաև շինանձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար (2622 մ³/շին. ժամ.):

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսված հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հանույթի ծավալը կազմելու է 27000 մ³, որից 21600 մ³ հողային ծավալը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, իսկ մնացած մասը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է: Համաձայն տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքի առաջին շերտը՝ կավավազ խճով և մանրախճով:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է տարեկան մեկ մարդու հաշվարկով 70 կգ

100x70x3/1000=21տ /ծածկագիրը՝ 9120040001004/ և շինարարական աղբն է 4180 խմ ծավալով /ծածկագիրը՝ 9120060101004/, այդ թվում տարածքում առկա արտադրական և օժանդակ շինությունների քանդումից առաջացող թափոններ: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և պայմանագրային հիմունքներով աղբահավաք ծառայության կողմից կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շահագործման փուլում տրանսֆորմատորային ենթակայանում /ենթակայանի տեղադրումը նախատեսվում է համալիրի –3 նկուղային հարկում/ առաջացող հատկությունը կորցրած բանեցված յուղը /ծածկագիրը՝ 5410020702033/ կհավաքվեն մետաղյա տարողությունների մեջ և կհանձնվեն համապատասխան թափոնների վերամշակմամբ զբաղվող ընկերություններին: Հնարավոր վթարների ժամանակ յուղի արտահոսքը կանխելու նպատակով տրանսֆորմատորի տեղադրման բետոնյա հարթակն ունի թեքություն և հարթակի որոշակի հատված, որտեղ էլ կկուտակվի յուղը: Այնտեղից կհավաքվի սորբենտով և կպահվի մետաղյա տարողության մեջ, հետագայում նույնպես կտրամադրվի վերամշակող ընկերության:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի բարեկարգում և կանաչապատում, համաձայն Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության կողմից հաստատված՝ բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 2840 ք.մ:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ, որի տեսակային և քանակական կազմը ստորև բերված է՝

- թխկի՝ 8 հատ,
- իլենի՝ 24 հատ,
- ասպիրակ՝ 18 հատ,
- ֆորզիցիա՝ 12 հատ,
- խենոմելես՝ 8 հատ,
- սոսի արևելյան՝ 6 հատ,
- հուդայածառ՝ 6 հատ,
- լաբոռնում անագիրատերև՝ 1 հատ:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 550 մ^3, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Ոռոգումը նախատեսվում է կաթիլային եղանակով:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը նախատեսված է իրականացնել համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից 13.05.2019թ. տրված N ԳԳ/10176 տեխնիկական պայմանի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից մշակված ջրամիացման և ջրահեռացման նախագծման N ԷՀ 5246 տեխնիկական պայմանի, ինչպես նաև գործող նորմերի և կանոնների:

Համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի. ջրամատակարարումը նախատեսվում է՝ Գրիբոյեդով և Արողության փողոցների խաչմերուկով անցնող D=400մմ տրամագծով ջրագծից /P=1.0մթն, թուջե, շուրջօրյա/, ջրաչափական հանգույցի տեղադրման կետում կառուցվելու է դիտահոր, իսկ ջրահեռացումը նախատեսվում է միանալ Մամիկոնյանց և Վրացական փողոցների խաչմերուկով անցնող D=700մմ տրամագծով կոյուղագծին, միացման կետում կառուցվելու է դիտահոր:

Հակահրդեհային հիդրանտի տեղադրման ջրամատակարարումը նախատեսվում է Գրիբոյեդով փողոցով անցնող D=300մմ տրամագծով ջրագծից /P=1.0մթն, թուջե, շուրջօրյա/, միացման կետում կառուցվելու է դիտահոր:

Հեղեղատարը նախատեսվում է միացնել Գրիբոյեդով փողոցով անցնող D=300մմ տրամագծով հեղեղատարին, միացման կետում կառուցվելու է դիտահոր:

Հաշվի առնելով, որ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունը ինքնահոս ջրամատակարարում կարող է ապահովել մինչև 10մ ջրի ճնշում, ուստի անհրաժեշտ է նախատեսել մեկ ընդհանուր պոմպակայան՝ շենքերն կից տեղադրելով ժամանակակից և բարձր ՕԳԳ ունեցող պոմպեր:

Շինարարական աշխատանքների ընթացքում բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռնով, Երևան քաղաքի տեխնիկական ջրի ցանցից: Խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից 16.09.2021թ. տրված N ՏՊ-ՃՀԱ-0.4/0301 տեխնիկական պայմանի:

Համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ էլեկտրամատակարարումը կիրականացվի կառուցվելիք ենթակայանի 0.4 կՎ I և II հատոններից /ենթակայանի տեղադրումը նախատեսվում է համալիրի –3 նկուղային հարկում, տեղադիրքը ներկայացված է Հայտում/:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի էլեկտրամատակարարման սխեման անհրաժեշտ է համաձայնեցնել «ՀԷՑ» ՓԲ ընկերության տեխնիկական տնօրենի հետ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի գազամատակարումը նախատեսված է իրականացնել համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի: Համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 10.05.2019թ. տրված եզրակացության՝ բնակելի համալիրի գազաֆիկացումը 3100 մ^3/ժ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել տարածքի գազի բաշխիչ ցանցի գազատարից /միացվող գազատարում գազի ճնշումը՝ 1.0-1.5 կգ/սմ^2, գազատարի տրամագիծը՝ 729 մմ, ինչպես նաև անհրաժեշտ է գազի ճնշման կարգավորիչի տեղադրում/:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ջեռուցման և օդափոխության համակարգերը միտված են շենքի էներգոարդյունավետության բարձրացմանը:

Էներգախնայողության նպատակով բնակելի համալիրում նախատեսվում է շինարարությունն իրականացնել որոկյալ նյութերով, այդ թվում էներգաարդյունավետ ապակիներով երեսապատել ճակատային հանգույցները, ինչպես նաև օգտագործել ջերմամեկուսիչ ժամանակակից նյութեր:

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել Ա դասի, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են օդափոխվող երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտհանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են բարձր ջերմության խնայողություն:

Նախագիծը կմշակվի էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխան:

Ջեռուցումը և օդափոխությունը ողջ համալիրում կատարվելու է անհատական լուծմամբ օդորակիչների և ջեռուցման կաթսաների միջոցով:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Օդափոխության համար օգտագործվել են կոմպակտ համակարգեր, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել նույն պարամետրերով այլ համակարգերով:

Ներածումը և արտածումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Շենքի բնակելի մասի միջանցքներից և ավտոկայանատեղերից իրականացվում է ծխահեռացում: Ծխահեռացման օդամուղերը տեղակայված են տանիքի վրա:

Նախատեսված է օդափոխության արհեստական համակարգ ավտոկայանատեղից:

Արտածումը կատարվում է արտածման համակարգերի միջոցով: Օդահեռացումը կատարվում է երկու զոններից՝ վերևի և ներքևի: Անհրաժեշտ է նախատեսել CO գազի բաղադրությունը չափող ցուցիչ, որի ազդանշանի դեպքում կաշխատի արտածման օդամուղը: Ներածման համակարգերի միջոցով ապահովվում է մաքուր օդի մուտք ավտոկայանատեղի:

Բնակարանների սանհանգույցներից և խոհանոցներից օդի արտածումը բնական է:

Բոլոր սան. հանգույցների հորանների վրա վերևում նախատեսվում են դեֆլեկտորներ:

Սարքերի արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտանետումներից:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքներում փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը կիրականցվի փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները կծածկվի համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելի փոշու տարածումը,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը,
- նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը /550մ³/, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի << գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ,
- կանաչապատ տարածքների համար անհրաժեշտ ոռոգման ջուրը կմատակարարվի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից, ոռոգումը նախատեսվում է կաթիլային եղանակով,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կկազմակերպվի ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում կներգրավվեն ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTER
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
РА ЕРЕВАН ул. Ереванцев 29/1

- պարբերաբար կստուգվի շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և կիրականացվի կարգաբերումներ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, Nox և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Աղմուկի, թրթռումների և տատանումների մշտադիտարկումներ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 1960000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Առողջապահության, Արտակարգ իրավիճակների, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:

2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
6. Նախագծի վերջնական տարբերակում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:
7. Նախագծի վերջնական տարբերակում հաշվի առնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն՝ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշման պահանջները:
8. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Գազավիկ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Գրիբոյեդով փողոց 48/6 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ Վ. Վարդանյան